

Պարսիկները ձիուն տակը չոր խոտ դնելու տեղը , աւազն ու հողը լաւ մը կը չորցընեն ու անոր ոտքին տակը կը փռեն . ձին անոր վրայ շատ հանգիստ կը պառկի ու կը քնանայ :

Դէկ ձիերը ցուրտ երկիրներու մէջ ալ կը գտնուին , միայն թէ խոնաւ չըլլայ : Խոլանտայի մէջ որ խիստ ցուրտ երկիր է , ձիերուն չորցած ձուկ կուտան , և սակայն խիստ ուժով են , թէ պէտ և պղտիկ . ան աստիճան պղտիկներ կը գտնուին , որ մանր տղաք միայն կրնան վրանին հեծնալ :

Ուքրանիայի երկիրը , ու Տոն գետին քովերը , որ Պուճագ թաթար ալ կ'ըսուի , ձիերը դաշտերու մէջ արձակ կը քալեն՝ չորս հինգ հարիւրը մէկտեղ . երկիրը ձիւնով ալ ծածկուած ըլլայնէ , իրենք առջեւի ոտուըներով ձիւնը մէկդի կ'առնեն ու տակի խոտերը կ'ուտեն : Երկու իրեք ձիաւոր ասխումբերը կը հովուեն , և միանգամայն պահպանութիւն կ'ընեն անոնց : Ամէն խումբի մէջ մէյմէկ գըլխաւոր ձի կայ որ անոնց կ'առաջնորդէ , կարգ կը դնէ , ու քալելու կամկենալու նշան կուտայ . երբոր աւազակ կամ գայլյարձը կի վրանին , մէկէն զիրենք կարգի կը դնէ : Կն գլխաւորը խիստ արթուն ու աշխոյժէ . ստէպ իր խումբին չորս դին կը պարտի . թէ որ ձիուն մէկը իր կարգէն դուրս ելլէ , կամետե մնայ , մէկէն քովը կը վազէ , ուսին զարնելով նորէն իր կարգը կը բերէ : Պահպանուրը չորս հինգ տարի աշխատելէն ետքը երբոր կը սկսի ուժէ իյնալ , ան ատեն ուրիշ փառասէր ձի մը իր ուժին վրայ վստահած խումբին մէջէն կ'ելլէ , ու ծեր գլխաւորին հետ կը ծեծկուի . թէ որ ինքը յազմէ , մէկաներուն գլուխ կը կենայ , ու զանոնք իրեն կը հնազանդեցընէ :

Վինլանտիայի մէջ մայիս ամսուն երբոր ձիւները կը սկսին հալիլ , ձիերը իրենց տէրերուն քովէն կ'ելլէն , ու անտառներուն մէջ մասնաւոր տեղ մը կը ժողվուին , իբր թէ առաջուց մէկմէկու հետ խօսք դրած ըլլային

հաւաքուելու : Հոն ամէնքը խումբ խումբ կը բաժնուին , և աս խումբերը իրարու հետ ամենեւին չեն խառնուիր . ամէն խումբ արծելու համար անտառին մէկ կողմը իրեն կ'առնէ , և աներկրին կտորը իրեն կը սեպհականէ , ու մէկմէկու բաժնին մէջ չեն երթար : Երբոր իրենց արօտը համար , ան տեղը կը թողուն՝ ուրիշ տեղ կ'երթան , և հօն ալնոյն կարգը կը պահեն :

Ամերիկայի Ա իրշինիա ըսուած նահանգին մէջ վայրի ձիեր ալ կան . ասոնք այնպէս կատաղի կ'ըլլան որ քովերնին մարդ չկրնար մօտենալ . թէ որ մէկը կարենայ ասոնք բռնել ու սանձել իրենը կ'ըլլան : Ա այրի ձին շատ կը գտնուի նաև Այաթարստան , մանաւանդ Լասպից ծովէն անդին . երկըրցիք աս ձիերը բռնելու համար՝ որսի թռչուններ կը բանեցընէն՝ որ մասնաւոր աս բանիս համար ալ կը վարժեցընէն . աս թռչունները կ'երթան ձիերուն գլուխն ու վիզը այնչափ կը կտցեն որ ձիերը կը յոգնին անոնց հետ կուռըտելէն ու դիւրաւ ձեռք կ'իյնան :

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Ճարտարէ ճրագ շինելուն իւրագը :

Տնտեսական տնտեսութեան մէջ հարկաւոր բաններէն մէկն ալ ճրագ շինելն ըլլալով ամէն օր նոր գիւտերով կը կատարելագործուի աս արհեստը :

Ամէն մարդ գիտէ թէ ճրագին նիւթը կենդանեաց հալեցուցած ու մաքրած ճարպն է որ ճրագու ալ կ'ըսուի : Հոս դնենք թէ ճրագուն ինչպէս գործածելու է , և թէ աղէկ ճրագ շինելու համար ինչ գիւտեր գտնուած էն : Արպէս զի ճրագը աղէկ ըլլայ՝ պէտք

է հաւասար չափով գործածել ոչխարի, գառան, եղան ու կովու եղերը : Այս ձարպերէն զատ ուրիշ գրեթէ ամէն եղերը անյարմար են աս բանիս . մանաւանդ խոզի եղը, որ խիստ դիւրահալ ըլլալուն՝ վառելու ատեն կը վազէ ու գէշ հոտ մը կը ձգէ, բոցն ալ մութ ու խաւար կ'ըլլայ :

**Դ'**րագ շինելու համար՝ առաջ ձրագուն մանր մանր ջարդելու, և վրայի մաշկն ու մսի կտորուանքը մէջէն վերցընելու է, որպէս զի քիչ կրակով ալ դիւրաւ հալի՝ առանց այրելու ու սենալու : Հալեցընելու ամանը պէտք է ըլլայ պղնձէ խալիին մը, մէջի ձարպը անդադար խառնելու է, և երեսը կապած ձենձը կամ փրփուը քամոցով առնելու է : Հալեցընելէն ետեւ բարակ ձարմաղէ<sup>2</sup> անցընելով՝ փայտէ պղտիկ տակառներու մէջ լեցընելու ու բերաննին գոցելու է : Այսանկով ձրագուն երկայն ատեն հալած կը մնայ . ամառը քսանը օրս ժամէն հազիւ կը պաղի, իսկ ձմեռը տասուերկու կամ տասնը հինգ ժամէն ետքը :

Ոմանք տակառները թափծու երկըթէ կամ երկաթ թիթեղէ կը շինեն . աս տակառները ուրիշ երկըթէ տակառի մէջ դրուած են, որ առջինէն քիչ մը աւելի լայն է, ու մէջը տաք ջուր լեցուցած է . և որպէս զի ջուրը միշտ նոյն տաքութեան մէջ մնայ՝ տակը պղտի կրակարան մը կը դնեն, որով ձրագուն ամենեին չառիր : Ոմանք դրսի տակառին մէջ եռացած ջրի գոլորշիք կը լեցընեն :

**Դ'**րագ թափելու յարմար ժամանակը ձմեռն է, հոկտեմբերի վերջերէն ինչուան մարտ ամիսը :

Հերտ<sup>3</sup> անունով անդղիացին աս հնարքս գտեր է, որ երբոր հալած ձրագունին մէջ բորակային թթուուտ՝ խառնես, շատ աւելի կը պնդանայ, և առանց հալելու տաքութեան կը դիմանայ : Այս մէկ լիսրէ ձրագունին

մէջայեւայլ չափով կը դնէ թթուուտը . աղէկ տեսակ ձրագունին կրամմը թթուուտը բաւական է . որչափ որ եղը գէշ ու թոյլ ըլլայ՝ այնչափ ալ աս թթուուտը աւելցընելու է :

Վիչ մը կրակով ձարալը հալեցընելէն ետքը՝ թթուուտը մէջը դնելու ու անդադար խառնելու է, ինչուան որ ձարպը լեմոնի գոյն առնէ . ան ատեն պէտք է կրակէն վար առնել ու թողուլոր պաղի . ետքը աղէկ մը ձրզմելու է որ թթուուտով խառնուած հեղուկը դուրս ելլէ : Այս կերպով պատրաստուած ձրագուն դեղին գոյն մը կ'ունենայ . բայց բաց օդի մէջ ձրգելու ըլլասնէ դիւրաւ կը ձերմըկի : Այսով այնպէս աղէկ ձրագներ կը չի նուին որ ամենեին չեն վազեր, և սովորական ձրագներէն շատ վեր են :

**Դ'**րագին պայծառ վառիլը պատրուգին շինուածքէն ալ կը կախուի . անոր համար պատրոյգ շինելու բամբակը աղէկ սանտրած ու մաքրած պիտի ըլլայ, որ մէջը ամենեին կապկունտ ու աղա չունենայ . վասն զի ասոնք խոնաւութիւն կը պատճառեն . թելերը հաւասար ու միակերպ հաստութիւն պիտի ունենան, և զանոնք այնչափ միայն ոլըրելու է որ չքակուին, և ոլըրելուատեն չկունջմըտին : Ամբակը կարծ կարծ՝ բաժնելէն ետքը՝ տաք քացախով լուալու, ետքը չուքի մէջ չորցընելու է, զգուշանալով որ վըրան փոշի չնըսաի . երբոր կէս մը չորնայ՝ թեթեւ մը թօթվելու է որ թելերը բաժնուին : Այս կերպով պատրաստուած պատրոյգները շատ աղէկ լյս կուտան, և հարկ ըլլար զանոնք նաւթով՝ կամ քափուրով՝ և ուրիշ այսպիսի դիւրավառ նիւթերով թրծել :

**Դ'**րագ շինելու աժան կերպը կաղպարով թափելն է . աս կաղպարները ապակիէ կ'ըլլան, ու անոնց վարի ծայրը կոնոնածեւ ու քիչ մը ձագակիր՝ կը նմանի : Կաղպարները կը արեն կլոր ծակծըկած տախտակի մը

1. Քէլլէր :

2. Գլուխ էւէ+ :

3. Heard.

4. Գլ. Acide nitrique.

1. Զէւէ մէէ:

2. Կէթի եւուը:

3. Քէտիրի:

4. Խունի:

վրայ, ու ինչուան կաղպարներուն կէ-սը ծակերուն մէջ կըխոթէն . ան ծակծակ տախտակը երկու ոտքի կամ յենարանի վրայ կեցած է :

Երբոր կ'ուզես պատրոյգը կաղպարին մէջէն անցընել, մէկ ծայրը կապ մը կ'ընես ու մէջը պղտիկ փայտի կտոր մը կ'անցընես, անանկ որ երբոր պատրուգին մէկալ ծայրը կաղպարին մէջ երկընցընես՝ փայտ կապուած ծայրը վերի բերնին վրայ կը կռթընի . իսկ մէկալ ծայրը որ կաղպարին տակի ծակէն դուրս կ'ելլէ՝ կըբռնես ու կըքաշես, ան ծայրն ալ ուրիշ փայտի կտոր մը անցընելով կը կապես : Եւ որովհետեւ ձրագին քիթը կաղպարին վարի կողմը կ'իյնայ, անոր համար պատրուգին ան ծայրը գոնէ մէկ բթաչափ երկայն ձգելու է : Ինկէ ետքը հալեցուցած ձրագուն կաղպարներուն մէջ թափելու է, նայելով որ շատ տաք ըըլլայ : Ոովորաբար ձրագուն կաղպարներուն մէջ լեցընելու համար՝ թիթեղէ նեղբերան կամ կտուցով աման մը կը գործածեն . ձարալը ան ամանին մէջ դընելէն ետեւ սպասելու է որ պաղի ու երեսը բարակ մաշկ կապէ . վասն զիթէ որ խիստ տաք տաք լեցընես՝ ձարպը կը սկսի ցատքընել, պաղելէն ետքն ալ մոմերը կաղպարին մէջէն դժուար կ'ելլէն :

Երբոր կ'ուզես որ ձրագը երկայն ատեն դիմանայ, պէտք է պատրոյգները կաղպարներուն մէջ դնելէն առաջ՝ հալած մեղքամոմի մէջ թաթիւնես:

Կաղպարով թափելէն զատ՝ ձրագը ուրիշ կերպով մըն ալ կըշինեն, որ արեւելք աւելի սովորական է : Լազնի կամ եղեին փայտէ մէյմէկ կանգուն երկայնութեամբ գաւազաններ կ'առնեն, վրանին պղտի ձանկեր կը գամեն՝ պատրոյգները կախելու համար : Հալած ձրագուն լեցընելու համար ալ սեղանի մը վրայ դրուած փայտէ քառանկիւնի տաշտ մը ունին . աս

։ թէուէ :

տաշտը այնչափ խոր կ'ըլլայ որ պատրոյգը ուղղահայեաց գրքով բոլորովին մէջը կ'ընկղմի : Ի՞սպէս պատրաստելէն ետքը, վերի ըսած գաւազանները, որոնց վրայ պատրոյգները իրամէ հեռու անցուցեր են, մէկիկ մէկիկ կ'առնեն ու իրեք չորս անգամ ձրագուով լեցուն տաշտին մէջ կըխոթէն ու կը հանեն, և քիչ մը ատեն կը բռնեն որ առած եղերը պաղին, ու աւելին վար վազէ : Ի՞ցէկ մը սառելէն ետքը՝ նորիէն ձրագուին մէջ կըթաթիւնեն, նայելով որ ձրագուն միշտ իրբարեխառն տաքութենը մէջ մնայ . և ասոր համար՝ ինչպէս վերը ըսինք՝ ձրագուին տաշտը ուրիշ տաք ջրով լեցուն ամանի մը մէջ կը դնեն . Ի՞ս պատրոյգները այնչափ անգամ կըխոթէն կը հանեն, ինչուան որ վրայի մոմը ուղածներուն չափ հաստընայ . ետքը պաղտեղ մը կը կախեն որ բոլորովին սառին ու կարծրանան : Երբոր բոլորովին կը պաղին ձրագները, կ'առնեն անոնց երկու ծայրերը վայելուչ ձեռով կը շտկեն . աս գործողութիւնը դիւրաւ ընելու համար՝ այսպիսի պարզ գործիք մը ունին Եւրոպացիք, որ չորս սոտքի վրայ կեցած պղնձէ տախտակ մըն է, մէկ կողմէն ալ փորուած խողովակ մը ունի . աս խողովակին բերանը աման մը դրած է՝ հալած վազած ձարպը մէջը լեցուելու համար . պղնձէ տախտակին տակին ալ կը ակարանով մաղմաղ կրակ կը վառեն : Երբոր ան պղնձէ տախտակը ցափաւոր կը տաքնայ, ձրագները վրան կախուած գաւազանը կ'առնեն, ու ձրագներուն տակի ծայրերը ան տախտըկին վրայ շիտակ կը կռթընցընեն որ շուտ մը կը հալին, ու աւելորդ եղը ամանին մէջ կը վազէ : Ի՞ս բանս շուտով ու չափով ընելու համար՝ ան գաւազաններուն երկու ծայրերը ինչ երկայնութեամբ որ ուղեն մէյմէկ երկըթէ գաւազան կը հաստատեն, և ինչուան որ ան երկըթէ գաւազաններուն ծայրը տախտըկին դպչինէ՝ ձրագը կը հալեցընեն : Երբ-

որ աս ալ կը լմըննայ՝ վերի քիթն  
ալ նոյնպէս կը հալեցընեն . բայց ա-  
սիկայ զատ զատ կ'ըլլայ, և քիչ մը կո-  
նոնաձե. յետոյ կ'առնեն ձրագներուն  
գաւազանները, և բացօթեայ տեղ մը  
կը կախեն որ աղէկ մը չորնան ու ձեր-  
մըկին :

(ի) որ ձրագուին մէջ որոշ չափով  
մը (որ փորձով կ'իմացուի) հնդկաս-  
տանի շագանակի՝ փոշի էն խառնելու  
ըլլաս, մոմին լսու խիստ պայծառ  
կ'ըլլայ, ամենեին մուխ չհաներ ու  
չմազեր, և վառելու ատեն անոյշ հոտ  
մըն ալ կը բուրէ :

Դ' արդիւ ճերմէշնէլուն իւրպէ : —  
Ինչպէս որ վերն ըսինք, սովորական  
կերպը աս է որ ձրագները բաց տեղ  
մը կը կախեն՝ ցօղի ու պարզի մէջ,  
միայն կը նային որ վրանին արև ը-  
զարնէ : Հոս դնենք ձրագը քլորով՝  
Ճերմը կցընելուն կերպը :

Փայտէ մեծկակ մնտուկ մը շինել  
տուր ու ձրագները մէջի ճանկերէն  
կախէ, անսանկ որ ոչ մէկմէկու և ոչ  
մնտուկին դրացին : Ետքը մնտուկին  
ամէն ծակերն ու ճեղքերը աղէկ մը  
գոցէ ներսէն դրսէն թղթեր կպցը-  
նելով. մնտուկին խուփն ալ գոցէ ու  
չորս դին հաստ կտաւ մը կալցուր :  
Ո՞էկ բթաչափ կլոր ծակ մը բաց, ու  
մէջը ապակիէ կամ յախճապակէ խո-  
ղովակ մը անցընելով՝ ծակին բոլորտի  
քը աղէկ մը ծեփէ. իսկ խողովակին  
միւս ծայրը ան ամանին հաղորդէ՝ ո-  
րուն մէջ քլորը ջրով ու ծծմբային թը  
թուուտով պիտի լուծես : (ի) որ կ'ու-  
զես՝ մնտուկին վրայ պղտիկ պատու-  
հան մըն ալ կրնաս շինել՝ ութը կամ  
տասը բթաչափ մեծութեամք. ասոր  
վրայ Ճերմակ ապակի մը անցընելու  
ու բոլորտիքը աղէկ մը ծեփելու է :  
Շատ անգամ աս գործիքով 24 ժա-  
մունան մէջ ձրագները խիստ աղէկ կը  
Ճերմըկին :

1 Գ. Պ. Marron d'Inde.

2 Գ. Պ. Chlore.

## ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՎԱԴՐՈՒԹԻՒՆ

Յաղագու օգտակարութեանց և չափու-  
թագերական հանդիսից :

Ի՞նդ ամենայն կարեորաց 'ի զար-  
գացումն ազգի՝ յանցիատակ ժամա-  
նակաց հետէ և ամենայն ազգք բար-  
գաւաճեալք յիմաստութեան՝ կա-  
րեոր գատեցին զքերթողութիւնս  
թատերականս . յորս ոչ եթէ միայն  
իբր 'ի պատկերի նկարագրէ քերթողն  
զաւաքինութիւնս և զթերութիւնս  
մարդկան և զկիրս, այլ և զարսն զայ-  
նոսիկ՝ որք առաքինութեանց այնոցիկ  
և թերութեանց տեարք իցեն, ա-  
ռեալածէ 'ի մէջ կենդանիս, որք ինք-  
նին յանդիման ցուցանեն զգործս իւ-  
րեանց զառաքինիս և զմոլեկանս, և  
զհատուցումն վարձուցն և տուգանաց  
անդէն առեալ խնդան, և կամ 'ի  
զեղջեյապաշաւնստին : Այս չէ շատ-  
այլ և զոր 'ի բնութեան ոչ տեսանեմք՝  
զինորհուրդս մոտաց մարդկան զառա-  
քինեացն և զմոլելոց, եթէ զինչ 'ի  
խիզնս մտացն և 'ի սրտին զգայցէ այր  
այր 'ի բարեգործելն կամ 'ի զառա-  
ծանել 'ի չարիս, յայս ազգ քերթուա-  
ծոց ամենայնն մերկապարանոց կայ 'ի  
կենդանի մարդիկն . և թէ որպէս նո-  
քայաձախ ոչ զոր ունին 'ի սրտի 'հա-  
զորդեն այլոց, այլ բազում ինչ ընդ  
պատրուակաւ, մանաւանդ յորժամ 'ի  
կրից առաջնորդիցին : Արքն այնոքիկ  
կենդանացեալք 'ի խրատ հանդիսա-

1 Աս հարկաւոր ճառը յառաջարան է նորատիպ  
թատրերգութեանց որ հետ զհետէ պիտի հրա-  
տարակուին գրաբառ, ոմանկք ալ աշխարհաբառ:  
Կ'ուզէինք օրագրիս մէջ տոպագրէլ ան խազերը.  
բայց անոնց երկայնութիւնը անկարեց էր աս թեր-  
թերուս մէջ ամփոփել . թող որ կողմանը ա-  
նոնց ոյժն ու համն ալ կը կորսուէր . անոր համար  
ոչ միայն զանոնք զատ կը տպանք, հապա նաև ա-  
յառաջարանական տեղեկութիւնը համառօտելով  
կը գնենք հոս :